



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

No 1514-Ա/2

«25» դեկտեմբերի

**ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ
(ԹԵՄԱՏԻԿ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԳԻՏԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐԻ ՀԱՅՏԵՐԻ
ՄՐՑՈՒՅԹ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ, ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՔՍՏԸ ԵՎ
ՀՐԱՎԵՐԻ ՓԱԹԵԹԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1122 որոշմամբ հաստատված «Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման կարգի» 3-րդ կետով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 12-ի N 1579-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության կանոնադրության 14-րդ կետի «դ» ենթակետը՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ ԵՄ

1. Կազմակերպել գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման նպատակով գիտական թեմաների հայտերի մրցույթ:

2. Հաստատել մրցույթի հայտարարության տեքստը՝ համաձայն հավելված N 1-ի և հրավերի փաթեթը՝ համաձայն հավելված N 2-ի:

3. ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանին՝ մեկամսյա ժամկետում սահմանել Եվրոպական Միության հետազոտությունների և նորարարության «Հորիզոն 2020» շրջանակային ծրագրի մրցույթների շահառու, ինչպես նաև փորձաքննության փուլը (փուլերը) հաղթահարած խմբերին ՀՀ կրթության և գիտության նախարարության

գիտության պետական կոմիտեի կողմից հայտարարված մրցույթներում «H2020 BONUS-AM» խրախուսանք հատկացնելու պայմանները:

4. Մրցույթի արդյունքների հաստատման և գիտական թեմաների ցանկերում փոփոխությունների կատարման լիազորությունը վերապահել ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանին:

5. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանին:

ԼԵՎՈՆ ՄԿՐՏՉՅԱՆ

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեն կազմակերպում է գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման նպատակով գիտական թեմաների հայտերի **ՄՐՑՈՒՅԹ**:

Մրցույթին մասնակցելու հայտ ներկայացվում է համացանցային առցանց (on-line) ռեժիմով՝ գրանցվելով Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի մրցույթների հայտերի և հաշվետվությունների ընդունման համակարգում՝ <https://grants.scs.am> հասցեում, 2017 թվականի դեկտեմբերի 28-ից մինչև 2018 թվականի փետրվարի 28-ը ներառյալ (մինչև Երևանի ժամանակով ժամը 18:00):

Մրցույթի հրավերի փաթեթը գետեղված է Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի ինտերնետային կայքում՝ www.scs.am:

Մրցույթի վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ և խորհրդատվություն կարելի է ստանալ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի աշխատակազմի գիտական գործունեության կազմակերպման վարչությունում՝ աշխատանքային օրերին ժամը 14:00 - 17:00 (հեռախոսներ՝ 21-01-40 (*113), 21-01-40 (*108)):

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության
նախարարության գիտության պետական կոմիտե

Հ Ր Ա Վ Ե Ր
ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ (ԹԵՄԱՏԻԿ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԳԻՏԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐԻ ՀԱՅՏԵՐԻ
ՄՐՑՈՒՅԹԻ

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման նպատակով գիտական թեմաների (այսուհետ՝ Թեմա) հայտերի (այսուհետ՝ Հայտ) մրցույթը (այսուհետ՝ Մրցույթ) անցկացվում է համաձայն Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2017 թվականի դեկտեմբերի 25-ի N 1514-Ա/2 հրամանի:

1.2. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեն (այսուհետ՝ Կոմիտե) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում գիտության բոլոր բնագավառների մասնագիտություններով (Հավելված N 2.1) գիտական և գիտատեխնիկական հետազոտությունների իրականացման համար 12 կամ 24 ամիս տևողությամբ դրամաշնորհներ կտրամադրի «Բնական գիտություններ», «Ճարտարագիտություն և տեխնոլոգիա», «Բժշկական գիտություններ», «Գյուղատնտեսական գիտություններ» բնագավառների 2-5, «Հասարակական գիտություններ», «Հայագիտություն ու հումանիտար գիտություններ» բնագավառների՝ 2-4 անձից բաղկացած գիտահետազոտական խմբերի (այսուհետ՝ Խումբ) նախաձեռնությամբ ներկայացված և մրցութային կարգով ընտրված Թեմաների:

1.3. Հայտը չի քննարկվում, եթե՝

- բովանդակությամբ համընկնում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ֆինանսավորվող կամ ֆինանսավորված որևէ Թեմայի կամ ծրագրի հետ,
- նախագծի հեղինակի կողմից նախկինում իրականացված Թեմայի վերաբերյալ հաշվետվություն (այսուհետ՝ Հաշվետվություն) չի ներկայացվել կամ վերջինիս վերաբերյալ մասնագիտական փորձագիտական խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) կողմից տրվել է բացասական եզրակացություն,
- միաժամանակ ներկայացված է Կոմիտեի կողմից անցկացվող այլ մրցույթների:

1.4. Հեղինակային իրավունքի օբյեկտ հանդիսացող նյութեր պարունակող Հայտ և այնուհետև Հաշվետվություն ներկայացնելու դեպքում Խմբի ղեկավարը պետք է գործի «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դրույթներին համապատասխան: Հեղինակային իրավունքի կամ հարակից իրավունքների իրավատերն իր իրավունքները պաշտպանելու նպատակով կարող է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով դիմել դատարան:

1.5. Թեմայի շրջանակներում իրականացված հետազոտության արդյունքները գիտական ամսագրերում հրապարակելիս անհրաժեշտ է նշել Կոմիտեի կողմից ստացած աջակցության մասին.

- Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի տրամադրած ֆինանսավորմամբ՝ _____ ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:

- Исследование выполнено при финансовой поддержке Государственного комитета по науке МОН РА в рамках научного проекта № _____.

- This work was supported by the RA MES State Committee of Science, in the frames of the research project № _____.

1.6. Թեմայի իրականացման ընթացքում Կոմիտե է ներկայացվում ընթացիկ (12-ամսյա), իսկ ավարտից հետո՝ ամփոփիչ Հաշվետվություն, որոնք ենթարկվում են գիտական փորձաքննության:

1.7. Թեմայի ֆինանսավորումը դադարեցվում է ընթացիկ (12-ամսյա) Հաշվետվությունը սահմանված ժամկետում չներկայացնելու կամ վերջինիս վերաբերյալ Խորհրդի բացասական եզրակացության հիման վրա:

1.8. Կոմիտեն կարող է ֆինանսավորման երաշխավորված Թեմայի և Հաշվետվության անոտացիաները հրապարակել տպագիր կամ էլեկտրոնային եղանակով:

2. Մասնակիցներին ներկայացվող պահանջները

2.1. Խմբի բոլոր անդամները պետք է հանդիսանան Հայաստանի Հանրապետության մշտական բնակիչներ, ինչպես նաև Թեմայի կատարման ընթացքում բնակվեն Հայաստանի Հանրապետությունում:

2.2. Մրցույթին չեն կարող մասնակցել Կոմիտեի կողմից ֆինանսավորվող միաժամանակ երկու մրցույթային (այդ թվում՝ միջազգային) Թեմաների (ծրագրերի) ղեկավարները կամ կատարողները (բացառությամբ անհատական խրախուսման մրցույթների շահառուների), եթե այդ Թեմաները (ծրագրերը) չեն ավարտվում մինչև սույն Մրցույթի արդյունքում երաշխավորված Թեմաների ֆինանսավորման սկիզբը:

2.3. Խմբի ղեկավար կարող է լինել գիտական աստիճան ունեցող մինչև 70 տարեկան անձը (ու՛մ 70 տարին չի լրացել մինչև Հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալու օրը), ով ունի առնվազն 5 տարվա գիտական կամ գիտամանկավարժական գործունեության ստաժ և վերջին 5 տարիների ընթացքում միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում (Scopus, Thomson Reuters և այլն), ինչպես նաև Հայաստանի Հանրապետության և ԱՊՀ անդամ-պետությունների Բարձրագույն որակավորման հանձնաժողովների ցանկերում ընդգրկված գրախոսվող ամսագրերում հրապարակված առնվազն 5 հոդված կամ 2՝ առնվազն 5 տպագրական մամուլ ծավալով, գիտական կազմակերպության կամ բուհի գիտական խորհրդի երաշխավորություն ունեցող և ISBN նշումով հրապարակում (մենագրություն): Մեկ մենագրությունը համարժեք է գրախոսվող ամսագրերում հրապարակված 3 հոդվածի:

2.4. Առնվազն 3 անձից բաղկացած Խմբի անդամներից մեկը կարող է լինել գիտական խորհրդատու (այսուհետ՝ Խորհրդատու)՝ օտարերկրյա պետության մշտական բնակիչ, ով վերջին 10 տարիների ընթացքում համահեղինակ է Խմբի առնվազն մեկ անդամի առնվազն մեկ հրապարակման և ունի հրատարակված

հողվածներ այն ամսագրերում, որոնց գումարային ազդեցության գործակիցն (impact factor) առնվազն 50 է՝ «Բնական գիտություններ» և «Բժշկական գիտություններ» բնագավառներում իրականացվելիք Թեմաների համար կամ առնվազն 25 է՝ «Ճարտարագիտություն և տեխնոլոգիա», «Գյուղատնտեսական գիտություններ», «Հասարակական գիտություններ» և «Հայագիտություն և հումանիտար գիտություններ» բնագավառներում իրականացվելիք Թեմաների համար:

2.5 Թեմայի իրականացման ժամանակահատվածում տարեկան (12-ամսյա կտրվածքով) առնվազն 15 օր Խորհրդատուն պետք է գտնվի Հայաստանի Հանրապետությունում:

2.6 Խմբի անդամները (ներառյալ ղեկավարը և Խորհրդատուն) չեն կարող ընդգրկվել Մրցույթին ներկայացված մեկից ավելի Հայտերում:

2.7 Խմբում պետք է ընդգրկվի մինչև 35 տարեկան առնվազն մեկ մասնագետ՝ գիտաշխատող, ասպիրանտ, մագիստրոս, դիպլոմավորված մասնագետ կամ մագիստրատուրայի ուսանող:

3. Հայտ ներկայացնելը

3.1. Հայտը (Հավելված N 2.2) ներկայացնում է Խմբի ղեկավարը՝ Կոմիտեի հայտերի և հաշվետվությունների առցանց համակարգի (այսուհետ՝ Համակարգ) միջոցով (grants.scs.am)՝ 2017 թվականի դեկտեմբերի 28-ից մինչև 2018 թվականի փետրվարի 28-ը ներառյալ (Հայտի ուղարկման հնարավորությունը արգելափակվում է Երևանի ժամանակով ժամը 18:00-ին):

3.2. Կոմիտե են ներկայացվում հետևյալ փաստաթղթերը.

- Խմբի ղեկավարի դիմումը (Հավելված N 2.3),
- Համակարգում ձևավորված և ծածկագիր ստացած Հայտի տիտղոսաթերթը, ծախսերի նախահաշիվը (այսուհետ՝ Նախահաշիվ),
- գիտական կազմակերպության կամ բարձրագույն ուսումնական հաստատության (այսուհետ՝ Կազմակերպություն) ֆակուլտետի գիտական (գիտատեխնիկական) խորհրդի եզրակացությունը,
- Խմբում փոխկապակցված անձանց (ընտանիքի անդամներ՝ ծնող, եղբայր, քույր, ամուսին, երեխա) առկայության մասին տեղեկատվություն՝ Խմբի ղեկավարի ստորագրությամբ,
- մինչև 35 տարեկան մասնակցի (մասնակիցների) ասպիրանտ կամ մագիստրատուրայի ուսանող հանդիսանալու մասին տեղեկանքը, որտեղ նշված են մասնագիտությունը և ուսուցման տարին, ինչպես նաև մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի դիպլոմի պատճենը:

3.3. Պահանջվող փաստաթղթերը Կոմիտե են ներկայացվում աշխատանքային օրերին ժամը 10:00-13:00 և 14:00-17:00 (Օրբելի եղբայրների 22, 7-րդ հարկ, 708 սենյակ) կամ փոստով (Երևան 0028, Օրբելի եղբայրների 22): Փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետը 2018 թվականի մարտի 15-ն է:

4. Հայտերի գիտական փորձաքննությունը

4.1 Մրցույթի պայմաններին բավարարող Հայտերը տրամադրվում են Խորհրդին՝ գիտական փորձաքննություն իրականացնելու համար:

4.2 Գիտական փորձաքննության ժամանակ գնահատվում է Թեմայի գիտական կամ գիտատեխնիկական նորույթը և արդիականությունը, իրականացման նախադրյալները, Խմբի ղեկավարի և կատարողների ձեռքբերումները գիտության տվյալ բնագավառում, նրանց մասնագիտական որակավորման համապատասխանությունը նախատեսված հետազոտությունների իրականացմանը, աշխատանքի ծավալի, իրականացման ժամկետների և Նախահաշվի հիմնավորվածությունը, գիտության տվյալ բնագավառի/մասնագիտության առանձնահատկություններից բխող այլ հարցեր:

4.3 Հայտը գիտական փորձաքննության է ենթարկվում երկու փորձագետների կողմից: Յուրաքանչյուր Հայտի համար փորձագետը լրացնում է Կոմիտեի կողմից սահմանված գիտական փորձաքննության գնահատման թերթիկը (Հավելված N 2.4):

4.4 Գիտական փորձաքննության գնահատման թերթիկի յուրաքանչյուր հարցի պատասխանը տրվում է գնահատականի միջոցով, առավելագույնը 5 միավոր՝ 0.5 միավորի ճշտությամբ:

4.5 Փորձագետի գնահատականը կազմում է գնահատման սանդղակի առավելագույն միավորի 85 տոկոսը:

4.6 Խմբի ղեկավարի և կատարողների մասնագիտական համապատասխանությունը Հայտի բնագավառին և որակավորումը գնահատվում են Խորհրդի կողմից՝ ըստ գիտական գործունեության արդյունվետության ցուցանիշի որոշման մեթոդաբանության (հավելված 2.5): Խորհրդի գնահատականը կազմում է գնահատման սանդղակի առավելագույն միավորի 15 տոկոսը:

4.7 Հայտի գիտական փորձաքննության վերջնական գնահատականը երկու փորձագետների գնահատականների միջին թվաբանականի և Խորհրդի գնահատականի գումարն է:

4.8 Երկու փորձագետների գնահատականները 35 և ավելի միավորներով տարբերվելու դեպքում Հայտը տրվում է երրորդ փորձագետին՝ գիտական փորձաքննության: Այդ դեպքում գիտական փորձաքննության վերջնական գնահատականը երեք փորձագետների՝ երկու իրար մոտ գնահատականների միջին թվաբանականն է: Առաջին երկու փորձագետների գնահատականների և երրորդ փորձագետի գնահատականի հավասար տարբերությունների դեպքում գիտական փորձաքննության վերջնական գնահատականը երկու առավելագույն գնահատականների միջին թվաբանականն է:

4.9 Եվրոպական Միության հետազոտությունների և նորարարության «Հորիզոն 2020» շրջանակային ծրագրի մրցույթների շահառուների, ինչպես նաև փորձաքննության փուլը (փուլերը) հաղթահարած խմբերի կողմից ներկայացված Հայտերը, որպես «H2020 BONUS-AM» խրախուսանք, համարվում են Մրցույթի փորձաքննության փուլը հաջողությամբ հաղթահարած և երաշխավորվում են ֆինանսավորման. ֆինանսավորման պայմանները սահմանվում են Կոմիտեի նախագահի հրամանով:

4.10 Կոմիտեի և փորձագետների կողմից Հայտի բովանդակության, գիտական փորձաքննության ընթացքի և արդյունքի վերաբերյալ տեղեկությունների տրամադրումն այլ անձանց արգելվում է՝ համաձայն «Գիտական և գիտատեխնիկական փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դրույթների:

4.11 Գիտական փորձաքննության ավարտից հետո Կոմիտեն Հայտերի գիտական փորձաքննության վերջնական գնահատականների նվազման կարգով գիտական և գիտատեխնիկական գործունեության

յուրաքանչյուր բնագավառի/մասնագիտության համար ձևավորում է վարկանիշային ցանկ ու ներկայացնում Խորհրդին՝ քննարկման:

4.12 Խորհուրդը Կոմիտեի նախագահին է ներկայացնում Հայտերի գնահատականների վերջնական վարկանիշային ցանկը:

4.13 Կոմիտեի նախագահը, ելնելով Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման համար հատկացումների չափից, որոշում է գիտական և գիտատեխնիկական գործունեության յուրաքանչյուր բնագավառի/մասնագիտության շեմային գնահատականը, որին հավասար կամ դրանից բարձր գնահատված գիտական թեմաները երաշխավորվում են ֆինանսավորման: Կոմիտեի նախագահը հաստատում է Թեմաների ցանկը, ղեկավարների ցուցակը և յուրաքանչյուր Թեմայի կատարման համար նախատեսվող ֆինանսավորման ծավալը:

4.14 Կոմիտեն Համակարգի (grants.scs.am) միջոցով Խմբերի ղեկավարներին է տրամադրում գիտական փորձաքննության արդյունքները, որոնք ներառում են փորձագետների եզրակացությունները (ապահովելով փորձագետի անանունությունը), Խորհրդի գնահատականը, տվյալ բնագավառի/մասնագիտության շեմային գնահատականը, Հայտի գիտական փորձաքննության վերջնական գնահատականը:

4.15 Կոմիտեն Կազմակերպության ղեկավարին տրամադրում է Կազմակերպությունից ներկայացված և ֆինանսավորման երաշխավորված Թեմաների ցանկը, ղեկավարների ցուցակը և յուրաքանչյուր Թեմայի կատարման համար նախատեսված ֆինանսավորման ծավալը:

5. Մրցույթի արդյունքների բողոքարկումը

5.1. Մրցույթի արդյունքները կարող են բողոքարկվել Խմբի ղեկավարի կողմից՝ Մրցույթի արդյունքները Կոմիտեի պաշտոնական կայքում (www.scs.am) հրապարակելուց հետո 15 օրացուցային օրվա ընթացքում, Կոմիտե գրավոր դիմում ներկայացնելով:

5.2. Բողոքարկման դեպքում Հայտը մեկ փորձագետի կողմից ենթարկվում է կրկնակի գիտական փորձաքննության, արդյունքում ձևավորվում է Հայտի գիտական փորձաքննության վերջնական գնահատականը, որը կրկնակի գիտական փորձաքննության գնահատականի և դրան մոտ հիմնական գիտական փորձաքննության գնահատականի միջին թվաբանականն է:

5.3. Կոմիտեի նախագահը, հաշվի առնելով փորձաքննության հիմնական փուլից հետո առկա ֆինանսական հնարավորությունները, որոշում է բողոքարկման արդյունքում ձևավորված նոր շեմային գնահատականը, որը հավասար է կամ գերազանցում է տվյալ բնագավառի/մասնագիտության համար սահմանված շեմային գնահատականին:

5.4. Բողոքարկման արդյունքում Հայտը երաշխավորվում է ֆինանսավորման, եթե Հայտի վերջնական գնահատականը հավասար է կամ գերազանցում է տվյալ բնագավառի/մասնագիտության համար սահմանված նոր շեմային գնահատականին:

5.5. Եթե բողոքարկման արդյունքում տվյալ բնագավառի/մասնագիտության նոր շեմային գնահատականը հաղթահարել են ավելի մեծ թվով Հայտեր, քան հնարավոր է ֆինանսավորել, փորձագիտական հավասար

գնահատականի դեպքում, Խորհուրդը կազմակերպում է այցելություն Կազմակերպություններ, տեղում ծանոթանում Թեմայի կատարման համար անհրաժեշտ պայմանների առկայությանը, որից հետո միայն Կոմիտեի նախագահին տալիս է առաջարկություն՝ Հայտը ֆինանսավորման երաշխավորված Թեմաների ցանկում ընդգրկելու վերաբերյալ:

5.6. Հայտի կրկնակի փորձաքննության փորձագիտական եզրակացությունը վերջնական է:

5.7. Բողոքարկված Հայտերի հեղինակները բողոքարկման արդյունքների վերաբերյալ տեղեկացվում են համաձայն **4.14** ենթակետի:

6. Այլ դրույթներ

6.1 Ֆինանսավորման երաշխավորված Թեմայի ղեկավարի և կատարողների միջև, ինչպես նաև Կազմակերպության ղեկավարի և Թեմայի ղեկավարի միջև Հայաստանի Հանրապետության «Քաղաքացիական օրենսգրքով» սահմանված կարգով կնքվում են պայմանագրեր:

6.2 Կոմիտեի և ֆինանսավորման երաշխավորված Թեմայի ղեկավարի միջև Հայաստանի Հանրապետության «Քաղաքացիական օրենսգրքով» սահմանված կարգով կնքվում է պայմանագիր՝ **6.1** կետում նշված պայմանագրերի առկայության դեպքում:

6.3 «Բնական գիտություններ», «Ճարտարագիտություն և տեխնոլոգիա», «Բժշկական գիտություններ» և «Գյուղատնտեսական գիտություններ» բնագավառներում իրականացվելիք Թեմաների 12-ամսյա ֆինանսավորման առավելագույն ծավալները նախատեսել.

- 5; 4; 3 և 2 անձից բաղկացած Խմբերի համար համապատասխանաբար՝
- 7500,0 հազար, 6000,0 հազար, 4500,0 հազար և 3000,0 հազար ՀՀ դրամ՝ փորձարարական հետազոտություններ նախատեսած թեմաների համար,
- 7000,0 հազար, 5600,0 հազար, 4200,0 հազար և 2800,0 հազար ՀՀ դրամ՝ տեսական հետազոտություններ նախատեսած թեմաների համար,
եթե Խմբում նախատեսված չէ Խորհրդարան,

- 5; 4 և 3 անձից բաղկացած Խմբերի համար համապատասխանաբար՝
- 6600,0 հազար, 5100,0 հազար և 3600,0 հազար ՀՀ դրամ՝ փորձարարական հետազոտություններ նախատեսած թեմաների համար,
- 6200,0 հազար, 4800,0 հազար և 3400,0 հազար ՀՀ դրամ՝ տեսական հետազոտություններ նախատեսած թեմաների համար,

եթե Խմբում նախատեսված է Խորհրդարան:

6.4 «Հասարակական գիտություններ» և «Հայագիտություն և հումանիտար գիտություններ» բնագավառներում իրականացվելիք Թեմաների 12-ամսյա ֆինանսավորման առավելագույն ծավալները նախատեսել.

- 4; 3 և 2 անձից բաղկացած Խմբերի համար համապատասխանաբար՝ 5600,0 հազար, 4200,0 հազար և 2800,0 հազար ՀՀ դրամ, *եթե Խմբում նախատեսված չէ Խորհրդարան,*

- 4 և 3 անձից բաղկացած Խմբերի համար համապատասխանաբար՝ 4800,0 հազար և 3400,0 հազար ՀՀ դրամ, *եթե Խմբում նախատեսված է Խորհրդարան:*

6.5 Խորհրդատուի համար աշխատանքի վարձատրություն չի նախատեսվում:

6.6 Աշխատանքի վարձատրության համար հատկացված առավելագույն 12-ամսյա գումարը չպետք է գերազանցի.

- 5; 4; 3 և 2 անձից բաղկացած Խմբերի համար համապատասխանաբար՝ 6000,0 հազար, 4800,0 հազար, 3600,0 հազար և 2400,0 հազար ՀՀ դրամը, *եթե Խմբում նախատեսված չէ Խորհրդարան,*

- 5; 4 և 3 անձից բաղկացած Խմբերի համար համապատասխանաբար՝ 4800,0 հազար, 3600,0 հազար և 2400,0 հազար ՀՀ դրամը, *եթե Խմբում նախատեսված է Խորհրդարան:*

Աշխատանքի վարձատրության գումարը վերոնշյալ ծավալներից պակաս նախատեսելու դեպքում ստարբերությունը կարող է օգտագործվել Նախահաշվի «Այլ ծախսեր» հոդվածում:

6.7 Նախահաշվի «Այլ ծախսեր» հոդվածով կարող են նախատեսվել գիտական սարքավորումների, հետազոտությունների ընթացքում օգտագործվող նյութերի ձեռքբերման կամ ծառայությունների ծախսեր: 150,0 հազար ՀՀ դրամը գերազանցող գնի սարքավորման կամ ծառայության անհրաժեշտությունը պետք է հիմնավորել Նախահաշվի մեկնաբանության մեջ:

6.8 Նախահաշվի «Այլ ծախսեր» հոդվածով գործուղումների համար նախատեսվող գումարը կարող է օգտագործվել ինչպես Հայաստանի Հանրապետությունում, այնպես էլ օտարերկրյա պետություններում գիտական միջոցառումներին մասնակցելու համար: Խորհրդատուի Հայաստանի Հանրապետություն գործուղման ծախսերը հոգալու համար նախատեսել առավելագույնը 600,0 հազար ՀՀ դրամ (12-ամսյա կտրվածքով): Խմբի անդամների գործուղման նպատակը և դրա հետ կապված բոլոր ծախսերն անհրաժեշտ է հիմնավորել Նախահաշվի մեկնաբանության մեջ:

6.9 Մինչև երկու շաբաթ տևողությամբ գործուղումների համար օրապահիկը և գիշերավարձն անհրաժեշտ է հաշվարկել ըստ Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմամբ սահմանված ծախսերի չափերի: Երկու շաբաթը գերազանցող գործուղումների համար Խմբի անդամները կարող են հայցել ամսական մինչև 1 500,0 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ: Խմբի յուրաքանչյուր անդամի օտարերկրյա գործուղումների ընդհանուր ժամանակը չպետք է գերազանցի երկու ամիսը (12-ամսյա կտրվածքով):

6.10 Նախահաշվի «Վերադիր ծախսեր» հոդվածով նախատեսվում է Կազմակերպության ղեկավարի իրավասությանը թողնված գումարը, որով տնօրենը (ռեկտորը) ապահովում է Կազմակերպության (բուհի գիտական մասի) գործունեությունը և ստեղծում Թեմայի կատարման համար անհրաժեշտ պայմաններ: Վերադիր ծախսերը չպետք է գերազանցեն Թեմայի «Այլ ծախսեր» հոդվածով նախատեսված 12-ամսյա գումարի 7 տոկոսը:

6.11 Խմբի ղեկավարի 2 ամիս (60 օր) Հայաստանի Հանրապետությունից անընդհատ բացակայության դեպքում Թեմայի ֆինանսավորումը դադարեցվում է: Խմբի անդամի 2 ամիս (60 օր) Հայաստանի Հանրապետությունից անընդհատ բացակայության դեպքում Խմբի ղեկավարը 10-օրյա ժամկետում պետք է դիմի Կոմիտե՝ համարժեք փոփոխություն կատարելու կամ Խմբի անդամների թիվը մեկով կրճատելու

միջնորդությամբ: Խմբի անդամների թվի կրճատման դեպքում Խմբի ղեկավարի և Կոմիտեի միջև կնքվում է պայմանագրի գնի փոփոխության մասին համաձայնագիր:

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԸ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԴԱՍԻՉՆԵՐՈՎ

1. ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- 1.1. Մաթեմատիկա
- 1.2. Ինֆորմատիկա և համակարգչային գիտություններ
- 1.3. Ֆիզիկա և աստղագիտություն
- 1.4. Քիմիա
- 1.5. Երկրի մասին և դրան հարակից բնապահպանական գիտություններ
- 1.6. Կենսաբանական գիտություններ
- 1.7. Այլ բնական գիտություններ

2. ՃԱՐՏԱՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ

- 2.1. Քաղաքաշինություն և ճարտարապետություն
- 2.2. Էլեկտրատեխնիկա, էլեկտրոնիկա, էներգետիկա, համակարգչային և տեղեկատվական տեխնոլոգիաներ
- 2.3. Մեխանիկա
- 2.4. Մեքենագիտություն և մեքենաշինություն
- 2.5. Քիմիական տեխնոլոգիաներ
- 2.6. Նյութագիտություն
- 2.7. Բժշկական սարքաշինություն
- 2.8. Էկոլոգիա
- 2.9. Կենսատեխնոլոգիա
- 2.10. Նանոտեխնոլոգիա
- 2.11. Այլ տեսակի ճարտարագիտություն ու տեխնոլոգիաներ

3. ԲԺՇԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- 3.1. Ընդհանուր բժշկություն
- 3.2. Կլինիկական բժշկություն
- 3.3. Բժշկական կենսատեխնոլոգիա
- 3.4. Այլ բժշկական գիտություններ

4. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- 4.1. Անասնաբուծություն, անասնաբուժություն
- 4.2. Բուսաբուծություն
- 4.3. Հողագիտություն, ագրոքիմիա, բույսերի պաշտպանություն
- 4.4. Գյուղատնտեսական կենսատեխնոլոգիա
- 4.5. Այլ գյուղատնտեսական գիտություններ

5. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- 5.1. Հոգեբանություն
- 5.2. Տնտեսագիտություն և գործարարություն
- 5.3. Մանկավարժական գիտություններ
- 5.4. Սոցիոլոգիա
- 5.5. Իրավունք
- 5.6. Քաղաքական գիտություններ
- 5.7. Սոցիալական և տնտեսական աշխարհագրություն
- 5.8. Զանգվածային լրատվություն և հաղորդակցություն
- 5.9. Այլ հասարակական գիտություններ

**6. ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

- 6.1. Պատմություն, հնագիտություն
- 6.2. Լեզվագիտություն, գրականագիտություն
- 6.3. Փիլիսոփայություն, էթիկա
- 6.4. Աստվածաբանություն, կրոնագիտություն
- 6.5. Արվեստագիտություն
- 6.6. Այլ հումանիտար գիտություններ

Ուշադրություն: Ստորև բերվող բոլոր ձևերը նպատակ ունեն ծանոթացնելու առցանց լրացվող ձևերի հետ և դյուրացնելու առցանց լրացնելու գործընթացը:

ՀԱՅՏ
ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ (ԹԵՄԱՏԻԿ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ

Հայտը հանձնված է «_____» _____ 2018 թ. Ծածկագիր՝ _____
(ձևավորվում է Համակարգի կողմից)

Տ Ի Տ Ղ Ո Ս Ա Թ Ե Ր Թ

1. Հայտի վերնագիրը, բնագավառը և մասնագիտական դասիչը,
 2. բնույթը՝
 - 2.1 հիմնարար
 - 2.2 կիրառական
 3. Հուշող (բանալի) բառեր (մինչև 15 բառ)
 4. Ղեկավարի ազգանունը, անունը, հայրանունը, ծննդյան թիվը, գիտական աստիճանը, պաշտոնը, հեռախոսահամարը և էլեկտրոնային հասցեն
 5. Կազմակերպության լրիվ անվանումը, կազմակերպչի անվանումը և գերատեսչական պատկանելությունը, հասցեն, հեռախոսը և էլեկտրոնային հասցեն
 6. Նախագծի կատարման համար անհրաժեշտ ժամանակահատվածը (12 կամ 24 ամիս)
 7. Գիտահետազոտական խմբի (ներառյալ ղեկավարը) անդամների թիվը
 8. Պահանջվող ֆինանսավորման ծավալը _____ հազար դրամ, այդ թվում՝
 - 8.1 Աշխատանքի վարձատրություն (ներառյալ եկամտային հարկը) _____ հազար դրամ
 - 8.2 Այլ ծախսեր _____ հազար դրամ
 - 8.3 Վերադիր ծախսեր _____ հազար դրամ
- Խմբի ղեկավարի ստորագրությունը _____
- Կազմակերպության ղեկավարի կամ գիտական քարտուղարի ստորագրությունը _____

«_____» _____ 2018 թ.

Ն Ա Խ Ա Գ Ի Ծ

Ներկայացնել հայերեն և անգլերեն, յուրաքանչյուրը մինչև 12 էջ՝ ներառյալ գրաֆիկները, գծագրերը, լուսանկարները և գրականության ցանկը.

1. անոտացիա (1 էջ),
2. խնդրի դրվածքը, դրա արդի վիճակը, Թեմայի գիտական նպատակները, հետազոտական ծրագիրը, իրականացման եղանակները, եռամսյակային փուլերը, առկա և անհրաժեշտ նյութական ռեսուրսները (մինչև 8

էջ): Կիրառական բնույթի հետազոտությունների դեպքում ներկայացվում են նաև արդյունքի (արտադրանքի, նմուշի, ալգորիթմի և այլն)՝

- նկարագրությունը,
- կիրառության ոլորտը,
- հիմնական տեխնիկական բնութագրիչները,
- մրցակցային առավելությունները,

3. տվյալ ուղղությամբ Խմբի ունեցած ձեռքբերումները և ակնկալվող արդյունքները (մինչև 2 էջ),
4. օգտագործված գրականության ցանկը:

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆԱԽԱԳԾԻ ԿԱՏԱՐՈՂԻ ՄԱՍԻՆ

1. Ազգանուն, անուն, հայրանուն
2. Ծննդյան տարեթիվն ու ծննդավայրը
3. Կրթությունը (բուհ, մասնագիտություն, մասնագիտացում)
4. Որակավորումը (ասպիրանտ, մագիստրոս, դիպլոմավորված մասնագետ, մագիստրատուրայի ուսանող)
5. Գիտական աստիճանը
6. Վերջին թեզի վերնագիրը, մասնագիտական դասիչը, պաշտպանության տարեթիվը և վայրը
7. Աշխատանքի վայրը, պաշտոնը
8. Հեռախոսահամարները (աշխատանքային, բնակարանի, բջջային)
9. Էլեկտրոնային հասցեն
10. Նախագծի բնագավառին վերաբերող գիտական հրապարակումները

ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎ

Հայտի ծածկագիրը _____
(ձևավորվում է Համակարգի կողմից)

հազար դրամ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆ									
(ներառյալ եկամտային հարկ)									
Ազգանուն, անուն, հայրանուն	2018 թ. (7 ամիս)			2019 թ.			2020 թ. (5 ամիս)		
	Ամսական	Ամիսների քանակը	Պահանջ-վրդ գումարը	Ամսական	Ամիսների քանակը	Պահանջ-վրդ գումարը	Ամսական	Ամիսների քանակը	Պահանջ-վրդ գումարը
1)									
2)									
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐԸ									
ԱՅԼ ԾԱԽՍԵՐ, այդ թվում									
1. ՍԱՐՔԵՐ, ՆՅՈՒԹԵՐ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ				2018 թ.		2019 թ.		2020 թ.	
(150,0 հազար ՀՀ դրամը գերազանցող բոլոր ծախսերը հիմնավորել ծախսերի նախահաշվի մեկնաբանության մեջ)									
1)									
2)									
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐԸ									
2. ԳՈՐԾՈՒՂՈՒՄՆԵՐ (հիմնավորել ծախսերի նախահաշվի մեկնաբանության մեջ)									
1) տեղական գործուղումների տրանսպորտային ծախսեր									
2) տեղական գործուղումների օրապահիկ									
3) տեղական գործուղումների գիշերավարձ									
4) օտարերկրյա գործուղումների տրանսպորտային ծախսեր									
5) օտարերկրյա գործուղումների օրապահիկ									
6) օտարերկրյա գործուղումների գիշերավարձ									
7) գործուղումների հետ կապված այլ ծախսեր (վիզա կամ այլ վճարումներ)									
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐԸ									
3. ՎԵՐԱԴԻՐ ԾԱԽՍԵՐ									
ՀԱՅՅՎՈՂ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐԸ									

Իմբի ղեկավար՝ _____
(ստորագրություն) (անուն, ազգանուն)

Կազմակերպության ղեկավար՝ _____
(ստորագրություն) (անուն, ազգանուն)

Կազմակերպության գլխավոր հաշվապահ՝ _____
(ստորագրություն) (անուն, ազգանուն)

ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇՎԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հիմնավորել Նախահաշվի 150,0 հազար ՀՀ դրամը գերազանցող բոլոր ծախսերը:

գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման նպատակով գիտական թեմաների հայտերի մրցույթի հրավերի

ՀՀ ԿԳՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ
ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ

ՔԱՂԱՔԱՅԻ _____
(անուն հայրանուն)
_____ ից
(ազգանուն)

(հասցե)

(հեռախոս)

Դ Ի Մ ՈՒ Մ

Խնդրում եմ ընդունել գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման նպատակով գիտական թեմաների հայտերի մրցույթի մասնակցության «_____» ծածկագրով հայտը:

Դիմող՝ _____
(ստորագրություն)

(_____)
(անուն, ազգանուն)

«_____» _____ 2018 թ.

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԹԵՐԹԻԿ

Հարցաշարի յուրաքանչյուր հարցի պատասխանը տրվում է թվային գնահատականով, առավելագույնը 5 միավոր (0.5 միավորի ճշգրտությամբ)՝ հետևյալ սկզբունքով.

5	Գերազանց: Պատասխանը լիովին համապատասխանում է առաջադրված պահանջներին և թերություններն աննշան են:
4	Շատ լավ: Հարցի պատասխանն առաջադրված պահանջներին համապատասխանում է որոշակի վերապահումներով:
3	Լավ: Պատասխանն ընդհանուր առմամբ բավարարում է առաջադրված պահանջներին, թեև կան նաև զգալի թվով անհամապատասխանություններ, որոնք սակայն շփոթելի են:
2	Միջին: Հարցի պատասխանը բավարար չէ դրա վերաբերյալ ամբողջական կարծիք կազմելու համար:
1	Վատ: Պատասխանը ներկայացված է մակերեսորեն և խիստ անորոշ:
0	Շատ վատ: Հարցի պատասխանը բացակայում է կամ այն չի կարող որոշվել տեղեկատվության բացակայության պատճառով:

Հարցաշար

1.	Նպատակներ: Որքանո՞վ են արժեքավոր հետազոտության նպատակները:	
2.	Արդիականություն: Որքանո՞վ է արդիական առաջարկվող հետազոտությունը:	
3.	Նորոյթ: Որքանո՞վ է նոր ու հեռանկարային առաջարկվող հետազոտությունը:	
4.	Իրագործելիություն: Որքանո՞վ է իրատեսական առաջարկվող ժամանակահատվածում հետազոտության նպատակներին հասնելը:	
5.	Նախագիծ: Որքա՞ն հստակ է ձևակերպված նախագիծը:	
6.	Համապատասխանություն: Որքանո՞վ է նախագիծը համապատասխանում հետազոտության նպատակների ձեռքբերմանը:	
7.	Իրականացում: Որքանո՞վ է իրատեսական նախագծի իրականացումը:	
8.	Առնչությունն այլ բնագավառ/մասնագիտությունների հետ: Որքանո՞վ է նախագծի իրականացումը նպաստում տվյալ կամ հարակից բնագավառների/մասնագիտությունների առաջընթացին:	
9.	Կարևորություն: Որքանո՞վ է նախագիծը նորարարական իր արդյունքների հնարավոր կիրառություններով (գիտության հետագա զարգացում, տեխնոլոգիական արտադրանքների, համակարգերի և մեթոդների բարելավում, զգալի տնտեսական կամ հասարակական ազդեցություն):	
10.	Միջազգային համագործակցություն: Որքանո՞վ է նախագծի իրականացումն ընդգրկում միջազգային համագործակցություն:	
11.	Իրականացման մեթոդներ: Որքանո՞վ են նախագծում ներկայացված մեթոդները համապատասխանում հետազոտության նպատակների ձեռքբերմանը:	
12.	Իրականացման փուլեր: Որքանո՞վ են համապատասխանում նախագծի իրականացման փուլերը հետազոտության նպատակներին հասնելուն:	
13.	Իրականացման փուլերի վերահսկելիություն: Որքանո՞վ է իրատեսական նախագծի իրականացման փուլերի վերահսկելիությունը:	
14.	Մարդկային ներուժ: Որքանո՞վ է համապատասխանում խմբի անդամների թվաքանակն ու մասնագիտական որակավորումը նախագծի իրականացմանը:	
15.	Տեխնիկական ապահովվածություն: Որքանո՞վ են բավարար առկա և (կամ) ձեռքբերվելիք տեխնիկական միջոցները նախագծի իրականացման համար:	
16.	Արդյունքների տնօրինում: Որքա՞ն հստակ է ձևակերպված հետազոտության արդյունքների տնօրինումը. արդյունքների օգտագործում և տարածում (հրապարակումներ, գիտաժողովներ և այլն), նորարարական կարողության օգտագործում (տեխնոլոգիական ներդրում, ցուցադրում, փորձնական նմուշ, նախատիպ և այլն), մտավոր սեփականության տնօրինում (արտոնագիր, հեղինակային իրավունք և այլն):	
17.	Նախահաշիվ: Որքանո՞վ է համապատասխանում պահանջվող ֆինանսավորման ծավալը և դրա բաշխումն ըստ հոդվածների՝ հետազոտության նպատակներին հասնելուն:	
Փորձագետի ընդհանուր գնահատական		

Փորձագետի մեկնաբանություններ (ծավալը չի սահմանափակվում)

Հետազոտության նպատակների մեկնաբանություն (հարցաշարի 1-4 կետերը):
Նախագծի մեկնաբանություն (հարցաշարի 5-10 կետերը):
Նախագծի իրականացման մեկնաբանություն (հարցաշարի 11-17 կետերը):

Մասնագիտական խորհրդի գնահատական

1.	Հետազոտության ղեկավարում: Որքանո՞վ է համապատասխանում ղեկավարի մասնագիտական որակավորումը նախագծի իրականացմանը:	
2.	Կատարողների կազմ: Որքանո՞վ է համապատասխանում կատարողների մասնագիտական որակավորումը նախագծի իրականացմանը:	
3.	Երիտասարդ մասնագետի ընդգրկվածություն: Որքանո՞վ է համապատասխանում խմբում ընդգրկված երիտասարդ մասնագետի (մինչև 35 տարեկան), մասնագիտական ուղղվածությունը նախագծի իրականացմանը:	
Մասնագիտական խորհրդի ընդհանուր գնահատական		

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ
ԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՎԵՏՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇԻ
ՈՐՈՇՄԱՆ

1. Գիտական գործունեության արդյունավետության ցուցանիշը (այսուհետ՝ ԳԳԱՑ՝ E) որոշվում է ըստ հետևյալ բաղադրիչների՝

1) Գիտական ամսագրերի հրապարակումների՝ Հրապարակում գիտական ամսագրում՝ հոդված (Article) կամ ակնարկ (Review)՝ Web of Knowledge, Scopus և միջազգային գիտատեղակատվական այլ շտեմարանների (այսուհետ՝ ՄԳՇ), ՀՀ կամ օտարերկրյա որևէ պետության բարձրագույն որակավորման հանձնաժողովի (այսուհետ՝ ԲՈՀ) ցանկերում ընդգրկված ամսագրում:

$$E_1 = \sum IF \frac{(1 + C / 10)^{1/3}}{N^{1/3}},$$

Յուրաքանչյուր հոդվածի կամ ակնարկի համար՝

IF՝ ամսագրի տվյալ տարվա ազդեցության գործակիցը (այսուհետ՝ ԱԳ)՝ ըստ «Institute for Scientific Information (ISI JCR)»-ի տվյալների,

N՝ ընդհանուր համահեղինակների (համաղեկավարների) համամրցանակակիրների թվաքանակ,

C՝ հղումների քանակ՝ *առանց ինքնահղումների,*

0.2-ից ցածր IF-ի դեպքում նրան վերագրվում է՝

0.2՝ ԱԳ ունեցող կամ ԱԳ չունեցող, բայց ՄԳՇ ցանկերում ընդգրկված ամսագրի դեպքում,

0.15՝ ԱԳ չունեցող, ՄԳՇ ցանկերում չընդգրկված, բայց ՀՀ կամ օտարերկրյա որևէ պետության ԲՈՀ-ի ցանկում ընդգրկված ամսագրի դեպքում:

2) Մենագրությունների, կոլեկտիվ մենագրությունների, գիտամեթոդական ձեռնարկների, նյութերի կամ հոդվածների ժողովածուների հրապարակումների: Մենագրություն, կոլեկտիվ մենագրություն, գիտամեթոդական ձեռնարկ, նյութերի կամ հոդվածների ժողովածու՝ գիտական կազմակերպության կամ բարձրագույն ուսումնական հաստատության գիտական խորհրդի երաշխավորություն ունեցող, որևէ մեկ գիտական թեմայի նվիրված և ISBN ունեցող հրապարակում: Չեն գնահատվում բառարանները, կատալոգները, փաստաթղթերի ժողովածուները, դասագրքերը, ինչպես նաև ժողովածուների, գիտաժողովների նյութերի խմբագրումը և կազմումը:

$$E_2 = \begin{cases} \sum B \frac{P_{Sh} \cdot (1 + C / 10)^{1/3}}{N^{1/3}}, \\ \sum CA \frac{(1 + C / 10)^{1/3}}{N^{1/3}}, \end{cases}$$

Յուրաքանչյուր մենագրության, կոլեկտիվ մենագրության կամ գիտամեթոդական ձեռնարկի մասի, նյութերի կամ հոդվածների ժողովածուի նյութի կամ հոդվածի համար՝

B=0,25՝ օրար լեզվով հրատարակված մենագրություն կամ կոլեկտիվ մենագրություն,

B=0,20՝ հայերեն լեզվով հրատարակված մենագրություն կամ կոլեկտիվ մենագրություն,

B=0,15՝ գիտամեթոդական ձեռնարկ կամ օրար լեզվով հրատարակված նյութերի ժողովածու,

B=0,10՝ հայերեն լեզվով հրատարակված նյութերի ժողովածու,

CA=0,20՝ օրար լեզվով հրատարակված հոդվածների ժողովածու,

CA=0,10՝ հայերեն լեզվով հրատարակված հոդվածների ժողովածու,

P_{Sh}՝ ծավալ (տպագրական մամուլ, 16 էջ):

3) Գիտաժողովների մասնակցության²: Գիտաժողովների թեզիսները (Abstract) և նյութերում չընդգրկված ստենդային զեկույցները (Poster) չեն գնահատվում:

¹ 1-ին և 2-րդ կետերով ներկայացված տարեկան հրապարակումների ընդհանուր քանակը չպետք է գերազանցի 24-ը:

² Գիտաժողովների մասնակցության տարեկան քանակը չպետք է գերազանցի 12-ը:

$$E_3 = \begin{cases} \sum T \frac{1}{N^{1/3}}, \\ \sum P \frac{(1 + C/10)^{1/3}}{N^{1/3}}, \end{cases}$$

Յուրաքանչյուր պլենար զեկույցի կամ գիտաժողովի նյութերում (Proceeding) հրապարակման համար՝

T=1,00՝ արտերկրում տեղի ունեցած գիտաժողովի պլենար զեկույց,

T=0, 50՝ ՀՀ-ում տեղի ունեցած գիտաժողովի պլենար զեկույց,

P=0,15՝ արտերկրում տեղի ունեցած գիտաժողովի նյութ,

P=0,10՝ ՀՀ-ում տեղի ունեցած գիտաժողովի նյութ:

2. **ԳԳԱՑ-ը սույն մեթոդաբանության 1-ին կետի 1)-3)-րդ ենթակետերի գումարն է՝**

$$E = \sum_{i=1}^8 E_i :$$